ՏԱՐԵՑՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ
ԵՎ ԽՆԱՄՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԱՍՈՑԻԱՑԻԱ
ASSOCIATION OF HEALTHCARE AND
ASSISTANCE TO OLDER PEOPLE

Ամենյան 225Ա, 0005, Երևան
www.gerontology.am
info@gerontology.am
+(374) 60 903 103 / +(374) 41 703 103

№08-2024 28.02.2025

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ԱՀԱՐՈՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Խաչատրյան,

այս գրությամբ տեղեկացնում եմ, որ Ձեր՝ 2023թվ-ի փետրվարի 2-ի թիվ 065-Ա որոշմամբ 04.04.2023թ.-ի անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիային տրամադրված տարածքը, որը գտնվում է Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ գյուղում՝ 4-րդ փողոց, 5-րդ նրբ., թիվ 6 հասցեում, չի համապատասխանում տարեցներին մասնագիտացված ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ շինության չափանիշներին:

Հաշվի առնելով այդ հանգամանքը, խնդրում եմ լուծարել հիշյալ պայմանագիրը և փոխարենը Ասոցիացիային տրամադրել Մեծ Մասրիկ, 4-րդ փ., 5-րդ նրբ., թիվ 13 հասցեում գտնվող շինությունը (ուսուցչի տունը), որն առավել հարմար է Ասոցիացիայի նպատակներին: Այդ շինության վերանորոգումն ու շահագործումը որպես գերոնտոլոգիական կենտրոն իրականացվելու է Ասոցիացիայի և նրա տեղի ու միջազգային գործընկերների աջակցությամբ՝ ծառայելու համայնքի տարեց բնակիչների բարեկեցությանը և համայնքի հզորացմանը:

Հուսով եմ, որ առաջարկը կքննարկեք և կնպաստեք հարցի դրական լուծմանն ի շահ համայնքի:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

ԱՐԹՈՒՐ ԹՈՐՈՍՅԱՆ
Նախագահ
Տարեցների առողջության և խնամքի ապահովման ասոցիացիա

Digitally signed by
TOROSYAN ARTUR 4001910519
Date: 2025-03-01 13:23:11